

**ՊԱՏՄԱՄԵԼԻԹԱՅԻՆ ԺԱՌԱԳՈՒԹՅԱՆ  
ՄԱՏԵՆԱՅԱՐ**

**5**

МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ РА  
НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКИЙ ЦЕНТР  
ИСТОРИКО-КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ

ՀՀ ՄԱԿԱՐԴԱՎՈՐ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄԱՍՏԱԿՈՒԹՅԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԳԻՏԱԳԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

## УШАРДЗАН

(Памятник)

ЕЖЕГОДНИК

6

ИЗДАТЕЛЬСТВО “УШАРДЗАН”  
ЕРЕВАН 2010

ՀՈՒՇԱՐՁԱՆ

ՏԱՐԵԳԻՐԸ

Զ

MINISTRY OF CULTURE OF REPUBLIC OF ARMENIA  
SCIENTIFIC RESEARCH CENTER OF HISTORICAL  
AND CULTURAL HERITAGE

## HUSHARDZAN

(Monument)

ANNUAL

6

PUBLISHING-HOUSE “HUSHARDZAN”  
YEREVAN 2010

2010

Երևան

ՀՀ մշակույթի նախարարության  
«Պատմամշակութային ժառանգության  
գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ

Ի. Ի. Պիոտրյովսկի

ВАНСКОЕ  
ЦАРСТВО  
(УРАРТУ)



Издательство  
ВОСТОЧНОЙ ЛИТЕРАТУРЫ  
Москва  
1959

ՀԱՅԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԲՈՐԻՄ ՊԻՈՏՐՈՎՍԿՈՒ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒԵՈՒԹՅՈՒՆԸ

Բորիս Պիոտրովսկին իրավամբ համարվում է 20-րդ դարի նշանավոր գիտնականներից մեկը: Ապրելով և ստեղծագործելով անցյալ դարի հանգուցային ու, ինչու չե, ճակատագրական նշանակություն ունեցող պատմաշրջանում՝ Բ. Պիոտրովսկին գործուն, անմիջական մասնակցություն է ունեցել այդ իրադարձություններին. գրչով ու խոսքով, գործով ու կյանքով, իր բազմաթիվ ուսումնասիրություններով արտահայտել է ժամանակի ոգին ու արծագանքել դրանց: Անշուշտ, ունեցել է խոտորումներ և սայթաքումներ, հիմնականում՝ ժամանակաշրջանով բացատրվող վրիպումներ, վիճահարույց, երեմն մերժելի տեսակետներ, սակայն մի բան նրա մեջ մնացել է անաղարտ՝ անհուն սերը պատմության ու նշակույթի հանդեպ, հավատը լավագույն ապագայի նկատմամբ, որի համար նա չինայեց ջանք ու եռանդ, առողջություն ու ժամանակ:

Վաստակաշտ ակադեմիկոս Բ. Բ. Պիոտրովսկին ծնվել է 1908 թ. փետրվարի 1-ին Պետեր-



բուրգում, մանկավարժների ընտանիքում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվում է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ-Պետերբուրգ) համալսարանի պատմալեզվագիտական ֆակուլտետը, որն էլ ավարտում է 1930 թ: Ուսանողական տարիներին լույս են տեսնում երիտասարդ գիտնականի՝ եգիպտագիտությանը նվիրված առաջին հոդվածները, որոնք ազդարացին ապագա խոշորագույն գիտնականի հետաքրքրության շրջանակում: Դրանում բացահիկ նշանակություն ունեցան նրա ուսուցիչ պրոֆեսորների հորդորներն ու առաջարկությունները:

1931 թ. Ն. Մարի հանձնարարականով նա ընդունվում է աշխատանքի Լենինգրադի պետական երմանականում՝ միաժամանակ լինելով հնագիտության իմաստիուտի աշխատակիցը:

Դրանով սկիզբ դրվեց կազմակերպչական գործունեության մի նոր ձևի՝ թանգարանի ու գիտահետազոտական և մանկավարժական կառույցների միջև:

1930-ական թվականներին բացառիկ հետաքրքրություն էր առաջացել Անդրկովկասի և, հատկապես, Դայաստանի հնագիտության համեմատ, որին անմնացորդ նվիրվեց մեծանուն գիտնականը ևս:

Ն. Մարի և Յ. Օրբելու խորհրդով Բ. Պիոտրովսկին որոշում է գրաղվել ուրարտագիտությամբ և 1930 թ. գործուղում է Դայաստան: Ակզրում գրաղվում է կիլոպայան ամրոցների ուսումնասիրությամբ, ապա պեղումներ է սկսում Ծովինարի՝ «Ուրարտական Թեյշերա աստծո քաղաքի» ամրոցում: 1936 թ. նա մասնակցում է նաև Յ. Օրբելու գլխավորած Ամբերդի պեղումներին, որը յուրօրինակ դպրոց էր երիտասարդ գիտնականի համար: 1938 թ. գրած մի քանի գիտական հաշվետվությունների հիմնա վրա Բ. Պիոտրովսկուն շնորհվում է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Կանի թագավորության մշակույթի ուսումնասիրության սկիզբը դրվեց Թեյշերայի միջնաբերդի պեղումներով, որտեղ 1936 թ. երկրաբան Ղենյոխինը հայտնաբերել էր մի սեպագիր արծանագրություն:

Կարմիր բլուրի պեղումներով Պիոտրովսկու կենսագրությունում սկսվում է նոր, շրջադարձային փուլ: Նրա կյանքը և գիտական գործունեությունն անխօնիորեն կապվում են Դայաստանի և, մասնավորապես, այդ բացառիկ հուշարձանների հետ: 1939 թ. սկսվում են Կարմիր բլուրի երկարատև պեղումները՝ Դայաստանի պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի (արշավախմբի պետ՝ Կ. Ղաֆարյան), ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի (պետ՝ Ս. Տեր-Ավետիսյան) և Պետական Էրմիտաժի (պետ՝ Բ. Պիոտրովսկի) միացյալ ուժերով: 1945 թ. արշավախմբերի միացյալ դեկավորությունը վստահվում է Բ. Պիոտրովսկուն: Դայրենական պատերազմի ժամանակ տարիներին նա գրեց իր հիմքների աշխատությունը՝ նվիրված հայ ժողովոյի հնագույն շրջանի և Ուրարտուղ պատմության ու մշակույթին:

Բ. Պիոտրովսկին 1944 թ. պաշտպանեց դոկտորական ատենախոսություն, որը հրատարակվեց

«Ուրարտու» խորագրով: Պատերազմից հետո, 1946 թ. այդ մենագրության համար նրան շնորհվեց ԽՍՀՄ պետական մրցանակ: 1959 թ., նոր տվյալներով հարստացված և վերաշարադրված հրատարակվեց «Վանի թագավորություն» խորագրով գիրքը: Այն Ուրարտուի մասին մինչ այդ հայտնի բոլոր տվյալների յուրօրինակ հանրագումարն էր: Իսկ Կարմիր բլուրի պեղումների հաշվետվությունները լույս տեսան 1950, 1952, 1955 թվականներին՝ «Դայաստական պեղումներ Դայաստանում» մատենաշարի երեք գրքով: 1962 թ. տպագրվեց Բ. Պիոտրովսկու «Ուրարտուի արվեստը» մենագրությունը, որն այսօր էլ մնում է ուրարտական արվեստի մեկնաբանությանը նվիրված չգերազանցված կոթողային աշխատություն:

Բ. Պիոտրովսկին հիմնալի գիտեր հինարևելյան գրավոր ու հնագիտական սկզբնադրյուրները: Լենինգրադի համալսարանում Անդրկովկասի հնագիտության մասին նրա կարդացած դասախոսությունները հրատարակվեցին առանձին գրքով, որը պատմական տվյալ շրջանն ուսումնասիրողների համար դարձավ սեղանի գիրք:

Ղերևս 1949 թվականին լույս տեսած «Արքոլոգիա Զակավազիա» աշխատությունը, բացահայտում էր Դայաստանի հնագիտական մշակույթի փուլարաժաննան և ժամանակագրության հիմնախնդիրները, առանձնացնում Դայկական լեռնաշխարհի տեղը ու դերը համաշխարհային պատմության և մշակույթի համատեքստում:

1966-1990 թթ. մեծ գիտնականը Լենինգրադի պետական համալսարանի՝ Դին Արևելքի պատմության ամբիոնի վարիչն էր, 1980-1982 թթ. ԽՍՀՄ ԳԱ պատմության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարը:

Բ. Պիոտրովսկին 1964 թվականից մինչև իր կյանքի վերջը գլխավորում էր Էրմիտաժը, որը տասնյակ տարիներ ԵՊՀ պատմության ֆակուլտետի ուսանողների համար կարծես հարազատ տուն էր, ինչն, իհարկե, արդյունք էր նախ՝ Յ. Օրբելու,

ապա նաև Պիոտրովսկու՝ հայ ուսանողների հանդեպ ցուցաբերած հոգատարության և սիրո: Բազմաթիվ ուսանողների համար Բ. Պիոտրովսկին կարդում էր արժեքավոր դասախոսություններ՝ ինչպես պատմության, այնպես էլ համաշխարհային արվեստի և մշակույթի վերաբերյալ:

Գիտական աշխատանքին զուգահեռ, Պիոտրովսկին գիտավորում էր Լենինգրադի պետական համալսարանի՝ Դին Արևելքի պատմության և բանասիրության ամբիոնը, իսկ 1968-84 թթ. ԵՊՀ նրան հրավիրում էր Երևան՝ դասախոսնելու պատմության ֆակուլտետում: Իր Երկարամյա գիտամանկավարժական գործունեության ընթացքում նա պատրաստեց Դայաստանի հնագիտության բազմաթիվ մասնագետներ, ովքեր շարունակում են իրենց ավանդը ներդնել ուրարտագիտության գանձարանի հարստացման գործում:

Նա արժանացել է բազմաթիվ մրցանակ-

ների. 1939 թ. նրան շնորհվել է Ս. Գորկու անվան մրցանակ, 1964 թ. արժանացել է ՈՍՖՍՀ արվեստի վաստակավոր գործչի, 1983 թ. սոցական աշխատանքի հերոսի կոչման: Արտասահմանյան մի շարք ակադեմիաների պատվավոր անդամ էր, Բրիտանական ԳԱ, Բավարական ԳԱ, Ֆրանսիայի՝ արծանագրությունների և գեղեցիկ դպրության ակադեմիաների թղթակից-անդամ: Պարգևատրվել է Լենինի (3), Աշխատանքային կարմիր դրոշի (3) շքանշաններով, մի շարք մեդալներով: Դամբավաշատ գիտնական իր կյանքի վերջին տարիներին ծավալեց հասարակական-քաղաքական գործունեություն: Արցախի հիմնահարցի մասին հանդես եկավ նաև հրապարակախոսական և գիտական հոդվածներով, մերկացրեց աղբեջանական «վայ պատմաբանների» տեսակետները:

Բորիս Պիոտրովսկին վախճանվել է 1990 թվականի մարտի 14-ին:

## ԱՐԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

# ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ БОРИСА ПИОТРОВСКОГО

**Резюме**

Заслуженный академик Б. Б. Пиотровский родился первого февраля 1908 г. в Петербурге, в семье педагогов. После окончания школы поступил в Ленинградский университет на историко-языковедческий факультет, который окончил в 1930 г. В том же году, по заданию Н. Мара, поступил на работу в Ленинградский Государственный Эрмитаж, одновременно работая в институте археологии АН СССР.

По совету Мара и Орбели, Б. Б. Пиотровский решил заниматься урартологией и в 1930 г. отправился в Армению. В начале он занимался исследованиями циклопических крепостей, затем раскопками разных поселений (1936 г. в раскопках Амберда, под руководством Орбели). В 1938 г., на основе написанных научных отчетов, Б. Б. Пиотровскому присуждается степень кандидата исторических наук. Жизнь и научная деятельность Б. Б. Пиотровского тесно связана с Арменией, в частности с Кармир блуром, а также с другими исключительными памятниками.

В 1939 г. начинаются периодические раскопки Кармир блура, которые заканчиваются в 1971 г. В 1945 г. объединенное руководство экспедиции было доверено Б. Б. Пиотровскому. В

1944 թ. ոն написал книгу «История и культура Урарту», в 1959 թ. «Ванское царство», а так-же многочисленные труды, посвященные Армению. Его труды были удостоены многих государственных наград. Его деятельность продолжается и по сей день, его учениками.

**HAYK AVETISYAN**

## **BORIS BORISOVICH PIOTROVSKI**

### **Summary**

The merited academician B. B. Piotrovski was born on February 1, 1908 in Petersburg, in the family of a school teacher. After finishing school he continued his studies at Leningrad University, Department of Languages and History. Graduating from the University he, on N. Mar's instructions, began his career at Leningrad State Museum, the Hermitage. Simultaneously he worked at the Institute of Archaeology.

On Mar's and Orbeli's advice B. B. Piotrovski devoted himself to Urartology, and in 1930 came to Armenia. First he engaged himself in studying cyclopean fortresses, then in excavations of various settlements (in 1936 – Amberd, under the supervision of Orbeli). In 1938 for his scientific reports Piotrovski got the degree of a candidate of Historical Sciences. B. B. Piotrovski's life and scientific activities are closely connected with Armenia, particularly with Karmir Blur, as well as with other various significant monuments.

In 1939 he began periodical excavations at Karmir Blur that ended in 1971. In 1945 a mutual expedition was organized to Armenia, which was directed by Piotrovski. In 1944 he wrote a book "The History of Urartu", in 1959 – "The Kingdom of Van", and a lot of other works devoted to Armenia. He got a number of awards for his work.

His students follow his path, paying tribute to his activities in Armenian Archaeology.